

նուն կոչեցեալ, եւ այլ միեղէն եղբայրութեցս, որ աստ են ժողովեալ:

278բ. Ի խնդրոյ մաքրամիտ եւ սրբապէս Մովսէս քահանայի եւ կնոջն իւր (բաց անուան տեղը) եւ որդոցն (բաց երկու անուան տեղը) եւ դստերացն (բաց, երկու անուան տեղը) . լսելով զայն, թէ երանի որ ունիցի զաւակ ի սիրոն եւ ընտանեակ յեմ: Արդ որք հանդիպիք սմայ տեսանելով կամ օրինակելով, յիշեալիք ի մաքրափայլ յաղաթս ձեր զՄովսէս քահանայն ամ. ընտանաւք (ս!) հանդերձ: Եւ զիս զանարժանս Զաքարա հարեղա, որ միայն զանուան ունիմ եւ ոչ զգործս, զի յոյժ հնացեալ էր եւ փտեալ, բազում աշխտնք. եւ չարչարանաւք նորոգեցի սբ. գիրս, որ կոչի Ճաշոց: Կըկին (ս!) անդ (ս!) աղաչեմ զհանդիպողք սմա, զի յիշեալիք ի սրբայհաճոյ յաղաւս (ս!) ձեր զհայրն իմ Տր տր եւ զմայրն իմ Գոնցա հանկուցեալ ի Քս. եւ դուք յիշեալ ի իջ (ս!) ի միուսանդամ (ս!) զալուստն Քի ամէն:

1բ. Կարմրաղեղով.

Զոր Խաչատուր հոգով բարի
յիշեա յաղթս ով երիցանի,
եւ զԱբրահամ մեղօք իլի,
յիշեա ի տր ով սիրելի.
զի զխորանս ծաղկելի,*
մեղ մի դնէք թուղթ էր Թավրէժի:

*Քաց է քողած երեսը եւ չէ ծաղկած:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ. 33.

Ա. Գիրք. 236. ծ.

(Զեռ. էջմ. No. 1091)

Աւետարան, թուղթ, բոլորգիր Աբրահամ գրիչ եւ նկարիչ Սպիտակ. Ածածնի: Նկարազարդ, չորս աւետարանիչներն իրենց սկզբնազարդերով, եւ լուսանցքի զարդերով, միջակ արուեստ: Նոյնն է No. 2674. Յաւել. Բ. 28:

Ղուկասի վերջում.

«Զանարժան Աբրահամ յիշեա. սբ. վերապի տաւնին աւարտեցաւ յաւուր չբ. քաղոց, Գ. մարտի ԻԳ. թվ. ԶԼԱ.

Մատթ. ի տակ նկարած, գրով.

զանարժան Աբրահամս յիշեցէք ի Քր. Յս. Փրկիչ:»

Յովհ. վերջում. Փառք եւն.

Արդ գրեցաւ այս ձոյլ ոսկի որ փոխանորդէ Յի, ձեռամբ իմոյս անարժանի, որ Աբրահամ կոչի, ստունդանող պատուիրանի, եւ անցաւոր տն. աւրինի, սուտ անուն քահաի. եւ հեք փանաք չիք արեղի. յարեթականս տաւմարի եւ հայկազեան թվականի: Զ: եւ երսունի, նայ եւ մի ամ այժմ աւելի: Յերկիրս այս Վայի ձորի,

որ Եղեգեաց գաւառ կոչի: Բոլորբերդոյ յանապի! ի յահագին բարձր սարի, ի դրան սբ. մաւրս Ածածնի. եւ այլ սրբոցս՝ որ այս տեղի: Քանզի ձեռամբ իմ գրեցի. նաեւ ծաղկօք զարդարեցի, եւ աւարտեալ եւս կազմեցի, ոչ իմ կարեաւք այլ Յի:

Ի վայելումն բարեաւք բարի, Յակոբ ընտրեալ քհնի, եւ զաւակացն իւր ցանկալի, տիաւք տղայք ոյք են մանկտի. Զաքէոսի, Մաթէոսի, Մարտիրոսի, Ստեփանոսի:

Ի դառնութե. ժամանակի, որք եմ նեղեալք ի ձեռս տաճկի, ի խանութե. Յաղուպ բեակի, որ է այժմ ի Թավրէժ Թախտի: Համբաւ եղեւ ի յայսմ ամի, թէ հաճ նոցա հրով կայրի: եւ էր հայրապետ հայոց զարմի, տր. հոգեւոր Սարգիս կոչի, հեղ եւ խոնարհ ըստ Մովսէսի, համանման տր. Գրիգորի: Եւ երջանիկ եւ տր. արի եպս. յայսմ գաւառի, տն. Յոհաննէս սբ. եւրարի եւ Ստեփաննոս եպսի. եւ բարունեացս ցանկալի, մեծն Սարգիս յոյժ գովելի եւ ի սորին աշակերտի Աւագտիրի եւ Յակոբի եւ Յսայի նորարուսի, որք են ընորհօք հոգոյն իլի:*

Արդ աղաչեմ զձեզ, ով սբ. ընթերցողք եւ հանդիպողք եւ զաղափարողք սբ. աւետարանիս: յիշեալիք ի մաքրափայլ յաղաթս ձեր, զի միաբանք սբ. ուխտիս. Զհոգեւոր հայրն իմ եւ զուսուցիչն եւ զառաջնորդ սբ. տեղեացս զԱւագտր. վարդապետ, զտր. Ստեփաննոս սբ. աբեղայս եւ դասավար. զտր. Զաքարա հէրպտ. եւ մարմնաւոր եղբայր իմ. զտր. Դաւիթ աւաք եղբայրն իմ յոյժ ընորհալի եւ աւաք էրէց գեղէից: Զտր. Նահապետ աշակերտս մեր կուսակրան, որ զթուղթս կոկեաց: զտր. Կոստանդին: զտր. Ալէքսանոս փակակալն սբ. եկեղեցոյս: զտր. Աթանէսն: Զաղաչան դպիրս: Զբուրթէլ դպիրն եւ զմահան:

Արդ դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ յիշել ի տր. Յս. Քս. զստացաւ սորա զտր. Յակոբ քահն. եւ զկենակիցն իւր զԹանկասուղն եւ զորդիքն իւր: Զի ստացաւ զսա ի հալալ ընջից իւրոց, անջինջ յիշատակ իւր եւ ծնաւդացն: Լսելով զայն թէ երանի որ ունիցի զաւակ ի սիրոն եւ ընդանի յեմ: Եւ ետ գրել իմոյս տկարի ի վայելումն անձին իւրո եւ որդոցն եւ եղբարցն իւրոց: Յիշեցէք զտր. Յակոբն, զհայրն նորա զԻսահակն, զմայր նորա զԹամիկն եւ զեղբարքն զՄարգարէն, զՓիլիկն, զՄարկոսն, զՋանիարն, զԿոստանդինոսն եւ զբոքն նր. զՀայոցն եւ զՆուշն, եւ զհաւրեղբայրն նր. զՅովաննէսն եւ զորդիքն նր. զՍիմէոնն, զՈսկին, զԳաւգն, զՊատման եւ զմայր սոցա զԹուղթիկն ամէն: եւ զիս զանարժան գրիչս եւ զծնողսն իմ զՏէրտէրն եւ զԳոնցայն եւ զեղբարքն իմ զՄարգարէն, եւ զԱկոբ միայնակեացն. եւ եթէ մի բերան Ած. ողորմի ասէք, միոյն հաղարապատիկ առցէք զողորմութի. ի Քէ. Այ. մերոյ ամէն եւ եղիցի:

Եւ սղալանաց եւ խոչորութե. գրոյս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր:

*Մինչ այստեղ ոտանաւորով է: